«Հաստատում եմ»
«Երևանի հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի
Տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյան

01.09.2026թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

ՄԱՍՆԱԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

2026-2027

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Մանկավարժահոգեբանական աջակցության մասնախմբի գործունեությունն ուղղված է սովորողների անհատական կրթական կարիքների բացահայտմանը, դրանց համապատասխան աջակցության կազմակերպմանը և սովորողների առաջընթացի գնահատմանը:

I. Նպատակ և հիմնական խնդիրներ

Նպատակ՝ համակարգել մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների համատեղ գործունեությունը՝ ապահովելով սովորողների անհատական կրթական կարիքների բացահայտումը, մատչելի ու անվտանգ կրթական միջավայրի ձևավորումը, ԱՈՒՊ-ներով նախատեսված աջակցության իրականացումն ու արդյունքների շարունակական գնահատումը:

- ✧ Կազմակերպել մասնախմբի պարբերական նիստեր, համատեղ պլանավորում և մասնագիտական փոխօգնություն:
- ✧ Համակարգել առաջին դասարանցիների, նոր ընդունված և շարունակական աջակցություն ստացող սովորողների դիտարկումները:
- ✧ Աջակցել ԱՈՒՊ-ների նպատակների սահմանմանը, իրականացման ընթացքի դիտարկմանը և երկամսյա ամփոփումներին:
- ✧ Ուսումնասիրել տարբերակված ուսուցման, խելամիտ հարմարեցումների, աջակցող տեխնոլոգիաների և հաղորդակցման միջոցների կիրառումը:
- ✧ Կազմակերպել անհատական պարապմունքների դիտարկում, մեթոդական քննարկումներ, խորհրդատվություններ և փորձի փոխանակում:
- ✧ Խթանել ընտանիք–դպրոց–մասնագիտական թիմ համագործակցությունը և փաստաթղթավորման որակը:

II. Մասնախմբի գործունեության ուղղություններ

Մասնախմբի աշխատանքը ներառում է հատուկ մանկավարժական, հոգեբանական, լոգոպեդական, էրգոթերապևտիկ, վարքային և հեքիաթաթերապևտիկ աջակցությունը:

III. Տարեկան աշխատանքների պլան՝ ըստ ոլորտների

Ոլորտ 1. Աջակցության պլանավորում, կազմակերպում և ԱՈՒՊ-ների վարում

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
1	Նախորդ ուստարվա մասնախմբի աշխատանքների, հաշվետվության և բացահայտված դժվարությունների վերլուծություն	Օգոստոս 24–31	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Համադրել նախորդ տարվա հաշվետվությունը, ԱՈՒՊ-ների արդյունքներն ու դիտարկումները: Առանձնացնել շարունակվող դժվարությունները և նոր ուստարվա աջակցության առաջնահերթությունները:
2	Նորմատիվ փոփոխությունների և ՈւԴԱՏՊ-ի համապատասխան կետերի քննարկում	Օգոստոս 24–31	Մասնախմբի ղեկավար, տնօրենի տեղակալ	Քննարկել, թե կիրառելի փոփոխություններն ինչպես են անդրադառնում աջակցության կազմակերպման, փաստաթղթերի վարման և մասնագետների համագործակցության վրա: Համաձայնեցված քայլերն արձանագրել:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
3	Մասնախմբի կազմի, գործառույթների, նիստերի և աշխատանքային պլանի նախագծի քննարկում	Օգոստոս 25–31	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Հստակեցնել մասնագետների գործառույթները, համատեղ քննարկումների ընթացակարգը և պատասխանատուներին: Նիստի որոշումներն արտացոլել տարեկան պլանի նախագծում:
4	Մասնագետների անհատական կարգացուցակների կազմում, համադրում և հաստատման ներկայացման համակարգում	Սեպտեմբեր 1–15	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ, տնօրինություն	Համադրել պարապմունքների ժամերը դասացուցակի, սովորողների ծանրաբեռնվածության և մասնագետների աշխատանքի հետ: Համաձայնեցված կարգացուցակները ներկայացնել հաստատման:
5	Առաջին դասարանցիների և նոր ընդունված սովորողների առաջնային դիտարկումների կազմակերպում՝ հաղորդակցում, ճանաչողական, շարժողական, ինքնասպասարկման և վարքային հմտություններ	Սեպտեմբեր 1–15	ՄՀ թիմ, դասվարներ, դասղեկներ	Դիտարկել սովորողին դասի, խաղի և առօրյա իրավիճակներում: Արձանագրել ուժեղ կողմերը, հաղորդակցման եղանակը, ինքնուրույն կատարած գործողությունները և անհրաժեշտ աջակցության չափը:
6	Շարունակող սովորողների առաջընթացի և աջակցության կարիքների վերանայում, առաջնահերթությունների որոշում	Սեպտեմբեր 1–15	ՄՀ թիմ	Համադրել նախորդ ԱՈՒՊ-ի արդյունքներն ու ընթացիկ դիտարկումները: Որոշել, թե որ հմտություններն են պահպանվել, որոնք են կիրառվում նոր միջավայրում, և որտեղ է անհրաժեշտ շարունակել աջակցությունը:
7	Նոր ընդունված սովորողների կարիքի գնահատման/վերագնահատման հարցերի քննարկում՝ ծնողի համաձայնության և ՏՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում	Սեպտեմբեր 1–15	Տնօրինություն, ՄՀ թիմ, ծնողներ	Համադրել ծնողի, ուսուցչի և մասնագետների դիտարկումները: Ըստ անհրաժեշտության, ծնողի համաձայնությամբ և ՏՄԱԿ-ի հետ համագործակցությամբ հստակեցնել գնահատման կամ վերագնահատման հետագա քայլերը:
8	ԱՈՒՊ-ների երկարաժամկետ ու կարճաժամկետ նպատակների, աջակցության միջոցների և միջավայրային հարմարեցումների համատեղ մշակում	Սեպտեմբեր Մինչև 20-ը	ՄՀ թիմ, դասավանդող ուսուցիչներ, ծնողներ	Նպատակները ձևակերպել դիտարկելի գործողություններով՝ նշելով կատարման պայմանը, աջակցության չափը: Համաձայնեցնել հարմարեցումներն ու առաջընթացի գրանցման եղանակը:
9	Սովորողների դասարանային դիտարկումներ, դիրքավորման և անհատական ցուցումների քննարկում	Սեպտեմբեր Մինչև 15-ը	ՄՀ թիմ, դասվարներ	Դիտարկել նստելու դիրքը, նյութերի հասանելիությունը և հրահանգին արձագանքը: Դասվարի հետ համաձայնեցնել կիրառելի հարմարեցումները և դրանց արդյունքի ստուգման եղանակը:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
10	Մասնախմբի նիստ. դիտարկումների արդյունքների, ԱՈՒՊ-ների և աշխատանքային գրաֆիկների քննարկում	Սեպտեմբեր 28–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Դիտարկումների հիման վրա համաձայնեցնել աջակցության առաջնահերթությունները, ԱՈՒՊ-ի նպատակները և կարգացուցակները: Նիստի արձանագրության մեջ նշել պատասխանատուներն ու հաջորդ քայլերը:
11	ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկում, առաջին շրջափուլի արդյունքների ամփոփում (ձև 4)	Նոյեմբեր 2–13	ՄՀ թիմ, ուսուցիչներ, ծնողներ	Ձև 4-ում ելակետային տվյալները համեմատել ընթացիկ արդյունքների հետ: Նշել ինքնուրույն և աջակցությամբ կատարված գործողությունները և հիմնավորել առաջարկվող փոփոխությունները:
12	Մասնախմբի նիստ՝ մասնագիտական աշխատանքների ընթացքի ամփոփում	Նոյեմբեր 25–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Քննարկել ընթացիկ աջակցության արդյունքները, կիրառման դժվարությունները և մասնագետների միջև համաձայնեցման կարիք ունեցող հարցերը: Արձանագրել ընդունված որոշումները:
13	Առաջին կիսամյակի աշխատանքների և անհատական պարապմունքների դիտարկում, ամփոփում, խնդիրների ու հաջորդ քայլերի սահմանում	Դեկտեմբեր 25–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Ամփոփել իրականացված աշխատանքները, անհատական պարապմունքների դիտարկման արդյունքները և սովորողների առաջընթացը: Կիսամյակային հաշվետվության մեջ առանձնացնել լուծման կարիք ունեցող խնդիրները:
14	Երկրորդ կիսամյակի աշխատանքային ուղղությունների և անհատական պարապմունքների դիտարկման նախնական պլանավորում	Դեկտեմբեր 25–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Առաջին կիսամյակի արդյունքներից ելնելով՝ որոշել երկրորդ կիսամյակի աջակցության և անհատական պարապմունքների դիտարկման առաջնահերթ թեմաները: Կազմել նախնական ժամանակացույց:
15	Երկրորդ կիսամյակի կարգացուցակների և աջակցության առաջնահերթությունների վերանայում	Հունվար 4–12	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Վերանայել պարապմունքների ժամերն ու աջակցության կազմակերպումը՝ հաշվի առնելով սովորողների ընթացիկ կարիքներն ու դասացուցակը: Ճշտված պայմանները հաղորդել ներգրավված աշխատակիցներին:
16	ԱՈՒՊ-ների երկրորդ երկամսյա քննարկում (ձև 4)	Հունվար 7–15	ՄՀ թիմ, ուսուցիչներ, ծնողներ	Ձև 4-ում նշել, թե որ նպատակներում է գրանցվել առաջընթաց, ինչ չափի հուշում է դեռ անհրաժեշտ և որ հմտություններն է պետք ամրապնդել:
17	Մասնախմբի նիստ և ներդպրոցական վերահսկողության աշխատանքներին մասնակցություն	Հունվար 25–29	Մասնախմբի ղեկավար, տնօրենի տեղակալ, ԿԱԴԱՀ	Քննարկել դիտարկումների արդյունքները տնօրենի տեղակալի հետ: Մասնախմբի գործառույթներին վերաբերող առաջարկություններում նշել պատասխանատուներին և կատարման ժամկետները:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
18	Մասնախմբի նիստ	Փետրվար 24–26	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմի անդամներ	Քննարկել երկրորդ կիսամյակի անհատական պարապմունքների դիտարկման ընթացքը, խորհրդատվության կարիքները և աջակցությունը դժվարացնող հանգամանքները: Նիստի որոշումներով հստակեցնել հետագա քայլերը:
19	ԱՈՒՊ-ների երրորդ երկամսյա քննարկում (ձև 4)	Մարտ 15–26	ՄՀ թիմ, ուսուցիչներ, ծնողներ	Ձև 4-ում արձանագրել հմտության կիրառումը տարբեր միջավայրերում և տարբեր մարդկանց հետ: Ըստ դիտարկումների՝ առաջարկել փոփոխություններ նպատակներում կամ աջակցության միջոցներում:
20	Մասնախմբի նիստ՝ երրորդ շրջափուլի արդյունքների քննարկում	Մարտ 29–31	Ղեկավար, անդամներ	Համադրել երրորդ շրջափուլի տվյալները և որոշել, թե որ փոփոխություններն է անհրաժեշտ կիրառել մինչև տարեվերջ: Համաձայնեցնել արդյունքների կրկնակի դիտարկումը:
21	Մասնախմբի նիստ	Ապրիլ 26–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Քննարկել անհատական պարապմունքների դիտարկումից հետո տրված առաջարկությունների կիրառումը և անհրաժեշտ մեթոդական աջակցությունը: Ընտրել կրկնակի դիտարկման ենթակա հարցերը:
22	ԱՈՒՊ-ների չորրորդ երկամսյա քննարկում (ձև 4), տարեկան առաջընթացի գնահատում	Մայիս 24–29	ՄՀ թիմ, ուսուցիչներ, ծնողներ	Ձև 4-ում համեմատել տարեկան նպատակներն ու փաստացի արդյունքները: Նշել ձեռք բերված հմտությունները, ինքնուրույնության աստիճանը և հաջորդ տարի շարունակվող աջակցության կարիքները:
23	Մասնախմբի նիստ, հաջորդ տարվա առաջնահերթությունների նախնական քննարկում	Մայիս 25–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Մասնագետների ամփոփումների հիման վրա նախանշել հաջորդ տարվա ԱՈՒՊ-ների, միջավայրային հարմարեցումների և թիմային աշխատանքի առաջնահերթությունները:
24	Տարեկան պլանի կատարողականի, մասնագետների աշխատանքների, անհատական պարապմունքների դիտարկման և ԱՈՒՊ-ների արդյունքների համադրում	Հունիս–հուլիս Հունիսի 1–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Համադրել տարեկան պլանով նախատեսված և իրականացված աշխատանքները: Հաշվետվության նախագծում ներկայացնել արդյունքները, չիրականացված աշխատանքների պատճառները և հետագա քայլերը:
25	Մասնախմբի ամփոփիչ նիստ, առաջարկությունների և հաջորդ տարվա կարիքների քննարկում	Հունիս–հուլիս Հունիսի 25–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Քննարկել տարեկան հաշվետվության նախագիծը, մեթոդական նյութերի և մասնագիտական զարգացման կարիքները: Առաջարկներն ու որոշումներն ամրագրել արձանագրությամբ:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
26	Տարեկան հաշվետվության նախագծի ներկայացում և քննարկում՝ հաստատության սահմանած կարգով	Հունիս–հուլիս Հուլիսի 1–9	Մասնախմբի ղեկավար, տնօրինություն, ՄԽ	Ներկայացնել տարեկան հաշվետվությունը և հաջորդ տարվա առաջարկությունները: Քննարկման արդյունքներն արտացոլել հաշվետվության վերջնական տարբերակում:

Ոլորտ 2. Պարապմունքների դիտարկումներ և աջակցության արդյունավետության ուսումնասիրություն

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
1	Մասնագիտական աշխատանքի մեկնարկային արդյունքների ուսումնասիրում, անհրաժեշտ փոփոխությունների քննարկում	Հոկտեմբեր 1–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Համեմատել մեկնարկային ու ընթացիկ դիտարկումները: Քննարկել առաջադրանքների բարդությունը, հուշումների չափը և պարապմունքների կազմակերպման անհրաժեշտ փոփոխությունները:
2	Սովորողների հաղորդակցական նախաձեռնողականության խթանումը	Հոկտեմբեր Ըստ ժամանակացույցի	Մասնախմբի ղեկավար	Անհատական պարապմունքների դիտարկման ընթացքում արձանագրել, թե ինչպես է սովորողն ինքնուրույն խնդրում, ընտրում կամ մերժում՝ կիրառելով խոսք, ժեստ կամ հաղորդակցման այլ հասանելի միջոց:
3	Մասնախմբի նիստ՝ դիտարկումների և անհատական պարապմունքների դիտարկում արդյունքների քննարկում	Հոկտեմբեր 28–30	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Քննարկել դիտարկված փաստերն ու կիրառված աջակցության արդյունքները: Յուրաքանչյուր առաջարկության համար համաձայնեցնել կիրառման պայմանը և հետագա դիտարկման եղանակը:
4	Նախատեսված անհատական պարապմունքների անհատական պարապմունքների դիտարկումներ և հետադարձ կապ	Նոյեմբեր 6 և 16-ը	Մասնախմբի ղեկավար	Դիտարկել պարապմունքի նպատակի կապը ԱՈՒՊ-ի հետ, սովորողի մասնակցությունն ու աջակցության չափը: Մասնագետի հետ քննարկել կիրառված մոտեցումները և հաջորդ քայլը:
5	Ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ընթացիկ առաջընթացի մասնագիտական քննարկում	Նոյեմբեր 9–13	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Համադրել դասի ու անհատական պարապմունքի տվյալները: Առանձնացնել այն պայմանները, որոնց դեպքում հմտությունը դրսևորվում է, և առաջարկել դրա կիրառումը այլ իրավիճակներում:
6	Ներդպրոցական վերահսկողության պլանով նախատեսված աշխատանքներին մասնակցություն՝ լիազորությունների սահմաններում	Նոյեմբեր 2–30	Մասնախմբի ղեկավար, տնօրինություն	Մասնախմբի գործառույթների շրջանակում դիտարկել սովորողի մասնակցությունը, առաջադրանքների հասանելիությունն ու հարմարեցումների կիրառումը: Ամփոփել մասնագիտական դիտարկումները:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
7	Առաջին կիսամյակի սովորողների առաջընթացի նախնական ամփոփում և աջակցության արդյունավետության քննարկում	Դեկտեմբեր 14–18	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ	Համեմատել կիսամյակի սկզբի և ընթացիկ տվյալները: Նշել, թե որ աջակցությունն է նպաստել մասնակցությանն ու ինքնուրույնությանը և ինչը վերանայման կարիք ունի:
8	Մասնագետների աշխատանքի ընթացիկ դիտարկում, տարբերակված մոտեցումների և հաղորդակցման աջակցության գնահատում	Փետրվար 1–26	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Դիտարկել հրահանգների պարզությունը, առաջադրանքների տարբերակումը և հաղորդակցման միջոցների մատչելիությունը: Արձանագրել սովորողի արձագանքն ու անհրաժեշտ հուշումները:
9	Երկրորդ կիսամյակի անհատական պարապմունքների դիտարկումների ժամանակացույցի համաձայնեցում և մեկնարկ	Փետրվար Ըստ հաստատվող ժամանակացույցի	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Համաձայնեցնել մշտադիտարկման նպատակը, դիտարկվող ցուցանիշները, օրն ու ժամը: Մշտադիտարկումից հետո գրանցել քննարկված առաջարկությունները:
10	Անհատական պարապմունքների դիտարկում խելամիտ հարմարեցումների և աջակցող/միջին տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության ուսումնասիրությամբ	Մարտ Ըստ հաստատվող ժամանակացույցի	Մասնախմբի ղեկավար, անդամներ	Ուսումնասիրել՝ հարմարեցումն ու աջակցող միջոցը որքանով են հեշտացնում առաջադրանքի կատարումը, հաղորդակցումը կամ ինքնուրույն մասնակցությունը: Արձանագրել անհրաժեշտ ճշգրտումները:
11	Ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ընթացիկ արդյունքների ուսումնասիրություն	Ապրիլ 1–9	Մասնախմբի ղեկավար, ՄՄ, տնօրինություն	Համադրել դիտարկումները, աշխատանքների նմուշները և մասնագետների գրառումները: Առանձնացնել այն հմտությունները, որոնք սովորողն արդեն կիրառում է դասի և առօրյայի ընթացքում:
12	Անհատական պարապմունքների դիտարկում առաջարկությունների կատարման հետադարձ դիտարկում	Ապրիլ Ամսվա ընթացքում	Ղեկավար, անդամներ	Կրկնակի դիտարկմամբ ստուգել, թե ինչպես են կիրառվել առաջարկությունները և ինչ փոփոխություն է գրանցվել սովորողի մասնակցության կամ ինքնուրույնության մեջ:
13	Սովորողների հաղորդակցական նախաձեռնողականության խթանումը	Հոկտեմբեր	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ	Համեմատել ինքնուրույն և հուշումով հաղորդակցական նախաձեռնությունները: Մասնագետի հետ համաձայնեցնել, թե ինչ հնարավորություններ կարելի է ստեղծել նախաձեռնությունը խթանելու համար:
14	Խելամիտ հարմարեցումներ և աջակցող տեխնոլոգիաներ	Մարտ	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ	Դիտարկել միջոցի հասանելիությունն ու կիրառելիությունը տարբեր իրավիճակներում: Սովորողի արձագանքի հիման վրա առաջարկել հարմարեցման փոփոխություն կամ շարունակական կիրառում:

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
15	Տրված առաջարկությունների կիրառման կրկնակի դիտարկում	Ապրիլ–մայիս	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ	Նախնական և կրկնակի դիտարկումների տվյալները համեմատել նույն ցուցանիշներով: Ամփոփել արձանագրված փոփոխություններն ու շարունակվող դժվարությունները:

Ոլորտ 3. Մասնագիտական զարգացում, փորձի փոխանակում և խորհրդատվություն

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
1	«ՀՊՉ վերջնարդյունքներ» թեմայով սեմինար-քննարկման մասնակցություն/կազմակերպչական աջակցություն	Օգոստոս 25–29	Մասնախմբի ղեկավար, ՄՀ թիմ	Քննարկել ՀՊՉ վերջնարդյունքների և սովորողի անհատական նպատակների կապը: Ներկայացնել օրինակներ, թե ինչպես կարող են հարմարեցումները նպաստել սովորողի մասնակցությանը:
2	«Հատուկ մանկավարժական մեթոդների և աջակցության ռազմավարությունների կիրառումը դաստիարակի աշխատանքում» դասընթացին մասնակցություն/աջակցություն	Հոկտեմբեր 26–30	ԿԱԴԱՀ, ՄՀ թիմ	Դաստիարակների հետ գործնական օրինակներով քննարկել տեսողական օրակարգի, պարզ ցուցումների և քայլաշարերի կիրառումը ինքնասպասարկման ու առօրյա գործունեության ընթացքում:
3	Սեմինար՝ ուսուցման և ուսումնառության որակի բարելավման վերաբերյալ	Հոկտեմբեր 26–30	ՄՄ ղեկավարներ, անդամներ	Ներկայացնել տարբերակված առաջադրանքների և հաղորդակցման աջակցության օրինակներ: Քննարկել դրանց կիրառման պայմաններն ու արդյունքների դիտարկման եղանակները:
4	Դասավանդման արդյունավետ մեթոդների և նյութերի ներկայացում՝ զեկույց/սեմինար/փորձի փոխանակում	Հունվար 7–15	Ղեկավար, անդամներ	Մասնագետների միջև ներկայացնել կիրառված մեթոդի նկարագրություն, նյութի օրինակ և սովորողի արձագանքի տվյալներ: Քննարկել, թե որ պայմաններում է մոտեցումը կիրառելի:
5	Մասնագիտական այրման կանխարգելման միջոցառմանը մասնակցության աջակցություն	Մարտ 22–26	Հոգեբան, ԿԱԴԱՀ, անդամներ	Քննարկել մասնագիտական ծանրաբեռնվածության նշանները, գործընկերային աջակցության և աշխատանքային դժվարությունների համատեղ քննարկման հնարավորությունները:
6	«Հատուկ մանկավարժական մեթոդների և աջակցության ռազմավարությունների կիրառումը դասարանում» դասընթացին մասնակցություն/աջակցություն	Ապրիլ 1–9	ԿԱԴԱՀ, ՄՀ թիմ	Դասարանային օրինակներով ներկայացնել առաջադրանքի քայլերի բաժանումը, տարբերակված նյութերի և հաղորդակցման միջոցների կիրառումը: Ամփոփել ուսուցիչների գործնական առաջարկները:

Ոլորտ 4. Միջավայրային հարմարեցումներ և ուսումնամեթոդական նյութեր

Հհ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետ**	**Կատարող**	**Նշումներ**
1	Ուսումնական և անհատական պարապմունքների միջավայրի ուսումնասիրություն՝ ըստ սովորողների հաղորդակցական, զգայական և շարժողական կարիքների	Սեպտեմբերից Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշ-տության	ՄՀ թիմ, ուսուցիչներ	Դիտարկել նստատեղի դիրքը, նյութերի հասանելիությունը, աղմուկը և տեսողական ծանրաբեռնվածությունը: Ուսուցչի հետ համաձայնեցնել անհրաժեշտ հարմարեցումները և ստուգել դրանց ազդեցությունը սովորողի մասնակցության վրա:
2	Դասի պլանների օրինակելի ձևերի մշակում և ներկայացում			Մշակել և ներկայացել են դասի պլանների օրինակելի ձևեր՝ հաշվի առնելով դասի նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները, ուսուցման մեթոդները, սովորողների ակտիվ մասնակցությունը և գնահատման ձևերը: Նպատակն է ապահովել դասի պլանավորման միասնական և արդյունավետ մոտեցում:
3	Տեսողական օրակարգերի, քայլաշարերի, հաղորդակցման քարտերի և տարբերակված առաջադրանքների մշակում ու համատեղ կիրառման քննարկում	Սեպտեմբեր–մայիս Տարվա ընթացքում	ՄՀ թիմ, ուսուցիչներ	Նյութերը մշակել սովորողի ընկալման և հաղորդակցման եղանակին համապատասխան: Թիմում համաձայնեցնել դրանց կիրառումը դասի, անհատական պարապմունքի և առօրյա իրավիճակների ընթացքում:
4	Աջակցող սարքերի և տեխնոլոգիաների կիրառման դիտարկում, նյութերի վերանայում՝ ըստ սովորողների արձագանքի	Փետրվար–մայիս Ըստ անհրաժեշտու թյան	ՄՀ թիմ, ուսուցիչներ	Դիտարկել՝ սովորողը որքանով է կարողանում ինքնուրույն օգտվել սարքից կամ միջոցից և ինչ աջակցություն է պահանջվում: Արձագանքի հիման վրա ճշգրտել նյութը կամ կիրառման պայմանները:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների

մասնախմբի ղեկավար՝ **L. Սեյրանյան**

01.09.2026թ.